Հայտարարություն

Զինված ուժերի զորամասերում սուրճի վենդինգային սարքերով ծառայություն մատուցելու «Զինառ» ՓԲԸ իրավունքը զիջելու նպատակով աճուրդի անցկացման վերաբերյալ

I. ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Պատվիրատուն՝ «Զինառ» ՓԲԸ-ն 27.07.2020թ-ին ք. Երևան Արարատյան 99 հասցեում կանցկացնի ընդհանուր աճուրդ դասական եղանակով (այսուհետ՝ աճուրդ), որի առարկա է հանդիսանում ԶՈՒ զորամասերում սուրճի վենդինգային սարքերով ծառայություն մատուցելու իրավունքի զիջումը (այսուհետ՝ ծառայություն), որոնք խմբավորված են 6 չափաբաժիններում (լոտեր)՝

Չափաբաժնի համարները /լոտ/	*Ծառայության մատուցման վայր /ըստ մարզերի/*	*Սարքերի քանակ*	*1 սարքի մեկնարկային գինը ամսեկան կտրվածքով / դրամ /*	*Աճուրդի քայլը /դրամ/*
1	Երևան, Նուբարաշեն	23	25000	1000
2	Գեղարքունիքի, Տաուշի , Արմավիրի,Լոռու, Կոտայքի, Շիրակի և Արագածոտնի մարզեր	26	25000	1000
3	Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր	17	25000	1000
4	19916 զ/մ	23	25000	1000
5	19916 զ/մ	18	25000	1000
6	19916 զ/մ	22	25000	1000

Ծառայությունների տեխնիկական առաջադրանքը, ինչպես նաև Ծառայության մատուցման վայրի հասցեները, և այլ պայմանների ամբողջական նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի մասը:

Յուրաքանչյուր մասնակից կարող է մասնակցել 1-6 չափաբաժիններից միայն մեկ չափաբաժնի աճուրդին:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը՝ով աճուրդավարի մուրճիկի 3 հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը:

Սույն ընթացակարգի շրջանակներում մասնակիցը աճուրդին նախորդող 3-րդ օրվա դրությամբ, բանկային երաշխիքի տեսքով, պետք է ներկայացնի հայտի ապահովում (նախավճար)՝ ընտրված չափաբաժնի ընդհանուր գումարի հետևյալ չափով և ժամկետներում.

Հայտի ապահովում	
Չափաբաժնի ընդհանուր գումարի (ՀՀ դրամ)	*ժամկետը (ամիսը, տարեթիվը)*
2 տոկոս	12 ամիս *(հուլիս 2021)*

Պայմանագիրը կնքվում է 3 տարով և չափաբաժնի ընդհանուր գումարը հաշվարկվում է տվյալ չափաբաժնի սարքերի քանակի, ամսեկան կտրվածքով 1 սարքի մեկնարկային գնի և 3 տարվա ամիսների քանակի (36 ամիս) արտադրյալի միջոցով:

Աճուրդում չհաղթած մասնակիցների հայտի ապահովման բանկային երաշխիքները ետ են վերադարձվում աճուրդի օրվան հաջորդող 3 աշխատանքային օրում՝ մասնակցի դիմումի համաձայն:

II. ԱՃՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Ցանկացած անկախ նրա օտարերկրյա իրավաբանական անձ, կազմակերպություն կամ անհատ ձեռներեց լինելու հանգամանքից, ունի աճուրդին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են ՀՀ և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրությունների համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կամ պաշտպանության ապահովման համար:

3. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի՝

1) **«Նմանատիպ գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը»** որակավորման չափանիշին: Ընդ որում, համանման են համարվում նմանատիպ ծառայությունների մատուցման սույն հայտարարության հրապարակմանը նախորդող 6 ամիսների (Հունվար 2020թ – Հունիս 2020թ) ընթացքում գործող և/կամ կատարված պայմանագրերի առկայությունը, որոնց կատարումն աշխարհագրական առումով ընդգրկել է առնվազն ՀՀ 2 մարզերը, իսկ պայմանագրի գումարը, ամսեկան կտրվածքով, գերազանցում է Մասնակցի կողմից ընտրված չափաբաժնի ընդհանուր գումարի 50 տոկոսը: Պայմանագրերին կից պետք է ներկայացվեն նաև նույն ժամանակահատվածի համար ՀՀ ՊԵԿ ներկայացված պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 19.7 և 19.8 հոդվածներով սահմանված գործունեություն իրականացնելու վերաբերյալ հայտարարության կրկնօրինակները:

Մասնակիցը համարվում է սույն ենթակետով նախատեսված որակավորման չափանիշին բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

2) «Տեխնիկական միջոցներ » որակավորման չափանիշին: Ընդ որում, բավարար է համարվում այն մասնակիցը, որին սեփականության իրավունքով պատկանում է նրա կողմից ընտրված չափաբաժնի սարքերի ընդհանուր քանակի առնվազն 70 տոկոսը:

Մասնակիցը համարվում է սույն ենթակետով նախատեսված որակավորման չափանիշին բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

3) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին: Ընդ որում, բավարար են համարվում այն մասնակիցները, որոնք ունեն սպասարկման նորմերին համապատասխան գրանցված սպասարկող անձնակազմ: Որպես հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվի վերը նշված ժամանակահատվածի համար ՀՀ ՊԵԿ ներկայացված համապատասխան հաշվետվությունների կրկնօրինակները:

Մասնակիցը համարվում է սույն ենթակետով նախատեսված որակավորման չափանիշին բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

4. Աճուրդի անցկացման ժամանակ մասնակիցներին կարող է հայտնի դառնալ կամ վստահվել պետական գաղտնիք պարունակող տեղեկություն, որի հրապարակումը (ցանկացած ձևով) այլ անձի (այդ թվում՝ հարազատներին) կարող է առաջացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

III. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 3 օր առաջ, մինչև օրվա ժամը 16:00-ն, պատվիրատուից պահանջելու սույն հայտարարության վերաբերյալ պարզաբանում:

6. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հայտարարության բովանդակության շրջանակից:

IV. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Աճուրդին մասնակցելու համար մասնակիցը ներկայացնում է հայտ՝ փաստաթղթային ձևով:

8. Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ոչ ուշ, քան 16.07.2020թ., ժամը 11:00-ն:

Հայտերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև սույն կետով սահմանված ժամկետը լրանալը՝ ք. Երևան Արարատյան 99 հասցեով:

9. Հայտերը ստանում և գրանցում է Աճուրդի քարտուղար Սեդա Օհանյանը՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են:

10. Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված մասնակցության գրավոր դիմում՝ համաձայն հավելված N 1-ի,

2) աճուրդի որոկավորման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ տեղեկությունները,

11. Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

13. Սույն հայտարարությամբ նախատեսված՝ մասնակցի կողմից կազմվող փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

V. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

12. Հայտերի գնահատումը կատարվում է ըստ դրանց ստացման, իսկ արդյունքների ամփոփումը՝ 20.07.2020թ., ժամը 14:00-ին, ք. Երևան Արարատյան 99 հասցեում:

13. Հայտերի ամփոփումը ներառում է տեղեկատվություն ստացված հայտերի և գրանցամատյանում կատարված գրառումների մասին, ինչպես նաև հայտերի համապատասխանության վերաբերյալ:

14. Բավարար են գնահատվում սույն հայտարարությամբ նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը: Հակառակ դեպքում նախառրակավորման հայտերը գնահատվում են անբավարար, մերժվում և վերադարձվում են մասնակցին: Բավարար հայտեր ներկայացրած մասնակիցներին պատշաճ ձևով տեղեկացվում է Պատվիրատուի կողմից հրավերի վերաբերյալ՝ աճուրդի կանոնակարգին, պայմանագրի նախագծին ծանոթանալու և մասնակցի վկայական ստանալու համար:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երևան, Արարատյան 99 հասցեով, հեռախոս՝ +37410462750, +37491196559 :

Պատվիրատու՝ «Զինառ» ՓԲԸ

Հավելված N 1

ԴԻՄՈՒՄ
Աճուրդին մասնակցելու

----------Մասնակցի անվանում----------ն

1. հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՈՒ զորամասերում սուրճի վենդինգային սարքերով ծառայություն մատուցելու «Զինառ» ՓԲԸ իրավունքը զիջելու նպատակով կազմակերպվող աճուրդի թիվ --- չափաբաժնին,
2. հավաստում է, որ համապատասխանում է հայտարարությամբ սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին,
3. երաշխավորում է, որ բավարարում է հայտարարությամբ սահմանված որակավորման չափանիշներին ու կից ներկայացնում է դրանք հիմնավորող փաստաթղթերը,
4. ընդունում է, որ իր հայտը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կամ պաշտպանության ապահովման նպատակով:

Առդիր …. թերթ:

-----Մասնակցի անվանում----------ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ -------- հարկի վճարողի հաշվառման համարը --------:

-----Մասնակցի անվանում----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ -------- էլեկտրոնային փոստի հասցեն---------:

----- մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)---------- ----- ստորագրություն-------

Կ. Տ.